



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Արդյունաբերական սեփականություն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 2 (34)

ՄԱՍ
ЧАСТЬ 1

Агентство интеллектуальной собственности
Республики Армения

**ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ**

Официальный бюллетень

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 2005 թվականի հունիսի 8-ից

Երեւան 2005

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ 1

ԳՅՈՒՏԵՐ	5, 77
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	7, 79
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	19, 89
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	21, 91
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	23, 93
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին.....	25, 95
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	33
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման	
նշանների մասին	35
ՑՈՒՑԻՉՆԵՐ	61
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	65
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ	96

ՄԱՍ 2

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	5
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման	
նշանների մասին	7

Հրատարակվում է Մտավոր սեփականության
գործակալության կողմից 1995թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 1995г.

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
Тел. 563-258 отдел приема заявок
Тел. 561-126 отдел информационно-технологического
обеспечения

Internet: <http://www.armpatent.org>

E-mail: armpat@cornet.am

СОДЕРЖАНИЕ**ЧАСТЬ 1**

ИЗОБРЕТЕНИЯ	5, 77
Сведения о выданных патентах	7, 79
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	19, 89
Сведения о выданных патентах	21, 91
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	23, 93
Сведения о выданных патентах	25, 95
ТОВАРНЫЕ ЗНАКИ	33
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	35
УКАЗАТЕЛИ	61
СООБЩЕНИЯ	65
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	96

ЧАСТЬ 2

ТОВАРНЫЕ ЗНАКИ	5
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	7

CONTENTS**PART 1**

INVENTIONS
Information on granted patents
UTILITY MODELS
Information on granted patents
INDUSTRIAL DESIGNS
Information on granted patents
TRADE MARKS
Information on registered trade marks and service marks
INDEXES
REPORTS
TWO-LETTER CODES

PART 2

TRADE MARKS
Information on registered trade marks and service marks

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը
	A1 Գյուտի հիմնական արտոնագիր
	A2 Գյուտի նախնական արտոնագիր
	B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի հիմնական արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
24	արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը
31	առաջնային հայտի համարը
32	առաջնային հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
42	հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
44	գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
45	գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	գյուտի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
65	հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային փաստաթղթի համարը
71	հայտատու, երկրի կոդը
72	գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) 7 A61B 3/032 (11) 1603 (13) A2
(21) P20040127 (22) 08.11.2004
(42) 11.01.2005
(71) Լեւոն Մելիքյան (AM), Ալեքսանդր Մալա-
յան (AM)
(72) Լեւոն Մելիքյան (AM), Ալեքսանդր Մալա-
յան (AM)
(73) Լեւոն Մելիքյան, Երեւան, Արզումանյան 32,
բն. 18 (AM), Ալեքսանդր Մալայան, Երեւան, Պուշ-
կինի 40, բն. 92 (AM)
(54) Աչքի ցանցենու գունակոնտրաստային ախտո-
րոշման եղանակ
(57) Հայտարկվում է ցանցենու գունակոնտրաս-
տային ախտորոշման եղանակ, ըստ որի պացիենտի
աչքի հետազոտումը կատարում են գունային
տեստ-աղյուսակի միջոցով: Որպես տեստ-աղյու-
սակ օգտագործում են տարբեր ինտենսիվության
մոխրագույն ֆոնի վրա տարբեր չափի երկնա-
գույն գրաֆիկական նշաններով չորս տեստային
դաշտերով աղյուսակ: Պացիենտի մոտ՝ ցածր
եւ միջին ինտենսիվության դաշտերի նշանները
չտարբերելու դեպքում, ախտորոշում են նախա-
զլաուկոմա կամ I աստիճանի գլաուկոմա, իսկ
բարձր եւ ամենաբարձր ինտենսիվության դաշտերի
նշանները չտարբերելու դեպքում ախտորոշում են
II, III աստիճանի գլաուկոմա կամ դիաբետային
ռետինոպաթիա: Հետազոտումը կատարում են
լավ լուսավորության պայմաններում, տեստ-
աղյուսակից 30-40 սմ հեռավորության վրա եւ ոչ
ավելի քան 5 վայրկյանի ընթացքում:

Ապահովվում է աչքի ցանցենու հիվանդություն-
ների վաղ ախտորոշման ճշգրտությունը եւ
հավաստիությունը:

- (51) 7 A61B 5/05 (11) 1604 (13) A2
A61H 39/00
A61H 39/02
(21) P20040095 (22) 30.07.2004
(42) 11.11.2004

- (71) Մաքսիմ Մալկին (UA), Հարություն Հարություն-
յան (AM), Գեորգի Գասպարյան (AM)
(72) Մաքսիմ Մալկին (UA), Հարություն Հարու-
նյան (AM), Գեորգի Գասպարյան (AM), Անդրեյ
Գորշկով (UA), Իգոր Դուդչենկո (UA)
(73) Մաքսիմ Մալկին (UA), Հարություն Հարու-
նյան (AM), Գեորգի Գասպարյան (AM)
(54) Ակուպունկտուրայի կետերի հետազոտման
եւ դրանց վրա ազդելու սարք
(57) Սարքն ունի չափիչ եւ հենարանային էլեկտ-
րոդներ, անալոգաթվանշանային կերպափոխիչ,
հենարանային լարման աղբյուր, նմանակա-
յին ուժեղարար, միկրոէՅՄ-ով կառավարվող
հաշվողական սարք, նմանակային կոմուտատոր,
գալվանական կապազերծման սարք, արտաքին
էՅՄ, տեղեկատվության արտաքին աղբյուրները
հաստատում հիշասարքին միացնելու սարք,
հաղորդակցային եւ օպտիկական կերպափոխիչ-
ներ: Սարքը լրացված է ազդանշանի մոդուլա-
րարով, որն ունի լրացուցիչ նմանակային ու-
ժեղարար, որի մուտքը միացված է չափիչ
էլեկտրոդին, լրացուցիչ անալոգաթվանշանա-
յին կերպափոխիչ, միկրոէՅՄ-ով կառավարվող
լրացուցիչ հաշվողական սարք, լրացուցիչ
նմանակային կոմուտատոր՝ ակուպունկտուրա-
յին կետից ստացված ազդանշանը սեւեռելու, դրա
մոդուլման եւ վերադարձման հնարավորությունը
ստանալու համար:

Բարձրացվում է ակուպունկտուրայի կետերի
վրա ազդեցության ճշգրտությունը, շնչ.:

- (74) Ռ. Մանասերյան

- (51) 7 A61B 17/16 (11) 1605 (13) A2
A61B 17/24
(21) P20040094 (22) 29.07.2004
(42) 12.10.2004
(71) Աշոտ Թորոսյան (AM)
(72) Աշոտ Թորոսյան (AM)
(73) Աշոտ Թորոսյան, Երեւան, Արմենակ Արմե-
նակյան փող. 1-ին անց. 21 (AM)

(54) Բժշկական դուր

(57) Գյուտը վերաբերում է բժշկական տեխնիկային, մասնավորապես՝ վիրահատական գործիքներին եւ կարող է կիրառվել քթի մեջքի կոնսուրային ոսկրահատման ժամանակ:

Դուրն ունի բռնակ եւ ակոսավոր սուր հատիչով բանող մաս: Հատիչի վերին միստերի երկայնքով տեղադրված են ուղղորդ սեւեռիչներ, որոնք սահելով ոսկրի կոնսուրով, սեւեռում են հատող մասի դիրքը: Սեւեռիչների առջեւի ծայրերը հատիչի սուր մասի նկատմամբ առաջ են ցցված եւ սահունորեն կորացած են վեր՝ վիրահատման ժամանակ փափուկ հյուսվածքների վնասումը կանխելու համար: Հատիչի առջեւի մասը երկայնական առանցքի երկայնքով կարող է թեքված լինել դեպի վեր՝ ծռված քթի վիրահատման համար:

Բարձրացվում է դուրի գործունակությունը, 6 նկ.:

(51) 7 A61L 9/00 (11) 1606 (13) A2

A63J 23/02

(21) P20040103 (22) 13.08.2004

(42) 13.12.2004

(71) Օրբել Սեւոյան (AM), Պարույր Ջամբազյան (AM)

(72) Օրբել Սեւոյան (AM), Պարույր Ջամբազյան (AM)

(73) Օրբել Սեւոյան, Երեւան, Եղբայրության 19, բն.38 (AM), Պարույր Ջամբազյան, Երեւան, Մարշալ Բաղդամյան 4-րդ նրբ., 11 (AM)

(54) Բուրավետ հեղուկի կաթոցիչ

(57) Գյուտը վերաբերում է հոտեր վերարտադրող սարքերին:

Հոտավետ հեղուկի կաթոցիչն ունի ելք ունեցող՝ բուրավետ հեղուկով անոթ եւ էլեկտրամագնիս, որը տեղադրված է անոթի ներսում, էլեկտրամագնիսի միջուկին ամրացված է հեղուկի ելքի փական, անոթի վերին մասում գտնվում է հեղուկի վրա ճնշում ապահովող իներտ գազ:

Բարձրացվում է սարքի արագագործությունը, 1 նկ.:

(51) 7 B01D 39/02

(21) P20040086

(42) 13.09.2004

(71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ռիմա Մանուկյան (AM), Ջենմա Գաբրիելյան (AM), Մանուշակ Ապրեսյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր եւ անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Արդության փող. 2-րդ նրբ. 10 (AM)

(54) Ջտող փոշու ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է հեղուկների փոշենման զտող նյութերի ստացմանը եւ կարող է կիրառվել քիմիական, նավթաքիմիական, սննդի, հատկապես՝ զինեգործության արդյունաբերությունում: Ջրային միջավայրում մանրացնում են փքած պեռլիտը եւ փքած ժելատինը: Ստացված կախույթը 50-60% խոնավությամբ քանում են եւ չորացնում 200-300°C ջերմաստիճանում:

Բարձրացվում են զտող փոշու մակակլանման հատկությունները:

(51) 7 B21B 28/04

(21) P20040039

(85) 22.03.2004

(86) PCT/EP02/07214, 29.06.2002

(87) WO 03/035292 01.05.2003

(31) 10152718.7 (32) 19.10.2001 (33) DE

01125177.4 23.10.2001 EP

(71) Ալյունինիում Նորֆ ԳմբՀ (DE)

(72) Պետեր Էշներ (DE)

(73) Ալյունինիում Նորֆ ԳմբՀ (DE)

(54) Գլոցահաստոնի գրտնակների վերականգնման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է գլոցման արտադրությանը, մասնավորապես՝ ալյունինե նյութերի համար օգտագործվող տաք գլոցման գրտնակների վերականգնման եղանակին:

Ըստ եղանակի, գրտնակները վերականգնվում

են դրանց մակերեսային մշակմամբ, ալյումինե նյութերի տաք գլոցման ժամանակ կամ դրանից հետո, ընդ որում մշակումը իրականացնում են հեղուկի, մասնավորապես՝ ջրի շիթով, որն ուղղում են 50-ից 250 ՄՊա ճնշման տակ, գերադասելիորեն 70-ից 150 ՄՊա ճնշման տակ: Կրճատվում է գլոցահաստոնի պարապուրդի ժամանակը, 2 նկ:

(74) Հ. Մանուկյան

(51) 7 B21C 23/24 (11) 1609 (13) A2

(21) P20040101 (22) 10.08.2004

(42) 12.10.2004

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն(AM)

(72) Գեորգ Պետրոսյան (AM), Մարատ Սաֆարյան (AM), Սամվել Առաքելյան (AM), Հասմիկ Պետրոսյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Երկմետաղական խողովակների պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերբերում է մեքենաշինությանը:

Համաձայն եղանակի, մամլման են ենթարկում միմյանց մեջ տեղադրված եւ ամրակցված երկու տարբեր նյութերից պատրաստված խողովակներ, ընդ որում կապարից պատրաստված արտաքին խողովակը ստանում են ձուլմամբ, իսկ հիդրոմամլման ժամանակ խողովակների տակ տեղադրում են արտաքին խողովակի նյութից պատրաստված տափօղակ:

Պարզեցվում է արտաքին բարակ շերտով երկմետաղական խողովակների պատրաստման տեխնոլոգիան, 2 նկ.:

(51) 7 B21D 26/02 (11) 1610 (13) A2

H01Q 15/16

G02B 5/10

(21) P20040072 (22) 16.12.2002

(42) 12.10.2004

(85) 11.06.2004

(86) PCT/GB02/05697, 16.12.2002

(87) WO 03/051554, 26.06.2003

(31) 0130141.5 (32) 18.12.2001 (33) GB

(71) Յունիվերսիթի օֆ Դարեմ (GB)

(72) Օրֆորդ Քեյթ Ջոն (GB), Մաքքոմբ Թոմաս Ջոն Լոուրի (GB), Չեդուիք Փոլա Մերի (GB), Օսբորն Ջոն Լուիս (GB), Բեյներ Սթեֆեն Մարկ (GB)

(73) Յունիվերսիթի օֆ Դարեմ (GB)

(54) Կոր մակերեսային կոշտ մարմնի ձեւավորման եղանակ եւ այդ եղանակով ստացված կոր մակերեսային կոշտ մարմին

(57) Գյուտը վերաբերում է կոր մակերեսայիններին, մասնավորապես՝ աստղադիտակներում եւ արելային էներգիայի կուտակիչներում օգտագործվող գոգավոր հայելիների տարրերի տեսքով անդրադարձիչներին եւ դրանց ձեւավորման եղանակներին:

Կոր մակերեսային կոշտ մարմինը ձեւավորված է կաղապարի միջոցով, որն ունի պահանջվող կոր մակերեսային հակադիր կորությամբ կոր մակերեսային, կաղապարն ապահովում է վակուումի կիրառում կաղապարի կոր մակերեսային ճկուն, ընդհանուր առմամբ հարթ մասի դեֆորմացման համար, կաղապարի կոր մակերեսային համապատասխանեցնելու համար եւ կառուցվածքորեն կոշտ հիմնային մասի առջեւի մակերեսային հարթ ճկուն մասի հակադիր մակերեսային կապակցելու համար՝ վակուումի կիրառման դեպքում:

Շրջագծային իրանային մասերը կարող են կապակցված լինել հիմնային մասի հետ: Հիմնային մասը ձեւավորված է կոշտ, ցածր խտության նյութից, մասնավորապես՝ ալյումինից կամ բջջային կառուցվածքի ալյումինի համաձուլվածքից: Ճկուն (անդրադարձիչ) մասը կարող է պարունակել բարակ մետաղաթերթ, մասնավորապես՝ անոդացված ալյումինի կամ ալյումինի համաձուլվածքի մետաղաթերթ, իսկ իրանի ցանկացած մասը մույնպես կարող է լինել ալյումին կամ ալյումինի համաձուլվածք:

Ստանում են թեթեւ եւ դիմացկուն կոր մակերեսային կոշտ մարմին, 2 անկախ կետ, 2 նկ.:

(74) Հ. Դավթյան

(51) 7 B23B 27/00

(11) 1611 (13) A2

(21) P20040124

(22) 29.10.2004

(42) 13.12.2004

(71) Վահե Բաղդասարյան (AM), Յենրիկ Բարսեղյան (AM)

(72) Յենրիկ Բաղդասարյան (AM), Յենրիկ Բարսեղյան (AM), Վահե Բաղդասարյան (AM), Նարինե Բաղդասարյան (AM), Մարինե Բարսեղյան (AM)

(73) Վահե Բաղդասարյան, Երեւան, Չարենցի թաղամաս 10, բն. 25 (AM), Յենրիկ Բարսեղյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 30/3, բն.31 (AM)

(54) Կտրող գործիքի օպտիմալ երկրաչափական պարամետրերի որոշման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ փխրուն նյութերի մշակմանը:

Չզող հաստոցով փորձարկվող գլանաձեւ նմուշը ձգում են մինչ դեֆորմացնելը եւ ըստ առաջացած դեֆորմացիայի անկյունների որոշում կտրիչի կտրող եզրի առջեւի եւ հետեւի անկյունների օպտիմալ մեծությունները: Որպես դեֆորմացիայի անկյուններ ընդունում են փխրուն նյութի նմուշի ձգման առանցքի նկատմամբ ձգումից առաջացած ճաքերի անկյուններն ու նրանց մեծությունները եւ առաջարկվող բանաձեւերով որոշում են կտրիչի առջեւի եւ հետեւի անկյունների փոխադարձ կապն ու նրանց սրման անկյունները:

Հնարավորություն է ստեղծվում մեկ փորձով տվյալ մշակվող փխրուն նյութի համար որոշել կտրիչի կտրող եզրի սրման օպտիմալ անկյուններ, որոնք կապահովեն կտրող գործիքի նվազագույն դիմադրությունն ու մաշվածքը, 1 նկ., 1 աղյուսակ:

(51) 7 B24B 53/14 (11) 1612 (13) A2

(21) P20040128 (22) 08.11.2004

(42) 13.12.2004

(71) Մաքսիմ Գրիգորյան (AM), Տիգրան Գրիգորյան (AM), Գուրգեն Անդրանիկյան (AM)

(72) Մաքսիմ Գրիգորյան (AM), Տիգրան Գրիգորյան (AM), Գուրգեն Անդրանիկյան (AM)

(73) Մաքսիմ Գրիգորյան, Երեւան, Ս. Տարոնցի, նրբ. 4, բն. 1 (AM), Տիգրան Գրիգորյան, Երեւան, Ս. Տարոնցի, 3/1, բն. 7 (AM), Գուրգեն Անդրանիկյան, Սյունիքի մարզ, Գորիս, Ավանգարդ թաղ., Սելյան կոտեջ 1, բն. 2 (AM)

(54) Ալմաստահղկանյութային գործիք

(57) Գյուտը վերաբերում է ալմաստահղկանյութային գործիքներին, որոնք նախատեսված են որդնակային հղկաքարերի ուղղման համար:

Ալմաստահղկանյութային գործիքը սկավառակաձեւ է, եւ նրա աշխատանքային ալմաստակիր շերտ ունեցող մակերեսային ունի սեղանաձեւ պրոֆիլով օղային թելիկների հաջորդական համառանցք շարք, ընդ որում թելիկների քայլը հաստատուն է եւ հավասար է որդնակային հղկաքարի թելիկների քայլին, իսկ գործիքի թելիկների թիվը հավասար է ուղղման պրոցեսի վերջնամաքիչ անցումների թվին: Գործիքի աջ եւ ձախ ճակատային ծայրամասերը լրացուցիչ ունեն ալմաստակիր գլանակալ մակերեսային թելիկներ, որոնց լայնությունը գերազանցում է որդնակային հղկաքարի թելիկի հաստությանը արտաքին տրամագծի վրա, իսկ գործիքի թելիկի արտաքին շրջանագծի եւ գլանակալ մակերեսային թելիկի շառավիղների տարբերությունը (h) որոշվում է համաձայն առաջարկված բանաձեւի:

Բարձրանում են գործիքի տեխնոլոգիական հնարավորությունները, 3 նկ.:

(51) 7 B65D 23/04 (11) 1613 (13) A2

B65D 1/02

(21) P20040114 (22) 28.09.2004

(42) 11.11.2004

(71) Անուշավան Միրզոյան (AM)

(72) Անուշավան Միրզոյան (AM)

(73) Անուշավան Միրզոյան, Երեւան, Կոմիտասի 36բ, բն.2 (AM)

(54) Ընպելիքի համար շշի բկանցք

(57) Ընպելիքի համար շշի բկանցքը փակվում է երկու մասից կազմված պարուրակավոր կափարիչով, որի մասերից մեկը առանձնանում է միացնող կապի խզումից, իսկ մյուսը մնում է շշի վզիկին: Շշի բկանցքին միակցված է կարճախողովակ, որը նախատեսված է ընպելիքը խմելու ժամանակ բերանում տեղակայելու համար: Կարճախողովակի եւ շշի բկանցքի միակցման մասում, օղակաձեւ փորվածքի մեջ, իրարից հավասարահեռ կատարված են առնվազն չորս միջանցիկ անցքեր:

Կափարիչի անջատվող մասի վրա լրացուցիչ կա օղակաձեւ միջնաշերտ, որն ունի օղակաձեւ փորվածքի չափերին եւ ձեւին համապատասխանող ելուստ: Շշի բկանցքի այսպիսի կառուցվածքը հավասարեցնում է շշի ներքին եւ մթնոլորտային ճնշումների տարբերությունը:

Բարձրացվում է շշից օգտվելու հարմարավետությունը, 3 նկ.:

(51) 7 B65G 15/00 (11) 1614 (13) A2
(21) P20040109 (22) 02.09.2004
(42) 13.12.2004
(71) Բելլա Բաբայան (AM), Վազգեն Բաբայան (AM)
(72) Բելլա Բաբայան (AM), Վազգեն Բաբայան (AM)
(73) Բելլա Բաբայան, Երեւան, Օրբելի եղբայրների 4, բն. 8 (AM), Վազգեն Բաբայան, Երեւան, Աբելյան 9, բն. 22 (AM)
(54) Ժապավենային փոխադրիչի ժապավենի կողային սահքը կարգավորող սարք
(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ քարհավաք մեքենաների փոխադրիչներին:

Սարքն ունի շրջանակ, անվերջ ժապավեն կրող, տանող եւ տարվող թմբուկներ, ժապավենի ձգվածությունը կարգավորող սարք եւ ժապավենի սահքի ուղղությունը որոշող սարք, որն ունի ժապավենի ճյուղերի միջեւ տեղադրված հոլովակով լծակ, որի մի ծայրը հողակապորեն միացված է շրջանակին, իսկ մյուսը՝ հողակապորեն տեղադրված է հիդրոգլանի սուզակոթին: Մի կամ մյուս կողմ ժապավենի սահման ժամանակ տվիչի միջոցով գործարկվում են տրակտորի խցիկ հաղորդվող լուսային ու ձայնային ազդանշանիչները:

Բարձրացվում է փոխադրիչի հուսալիությունը, 3 նկ.:

(51) 7 C02F 1/64 (11) 1615 (13) A2
(21) P20040091 (22) 27.07.2004
(42) 11.11.2004

(71) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Հայաստան Հակոբյան (AM), Մարիետա Ավետիսյան (AM)

(72) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Հայաստան Հակոբյան (AM), Մարիետա Ավետիսյան (AM)

(73) Գարիկ Կարապետյան, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM), Գրիգորի Այվազյան, Երեւան, Դավիթ Անհաղթի 18, բն. 32 (AM), Հայաստան Հակոբյան, Երեւան, Դավիթ Անհաղթի 18, բն. 32 (AM), Մարիետա Ավետիսյան, Երեւան, Ձորավար Անդրանիկի թաղամաս, Բ-2 զանգվ. 132, բն. 9 (AM)

(54) Երկաթից եւ մանգանից բնական ջրերի մաքրման եղանակ

(57) Երկաթից եւ մանգանից բնական ջրերը մաքրելու համար դրանք անց են կացնում ձեւափոխված ածխի շերտով, ընդ որում որպես ձեւափոխված ածուխ կիրառում են 1:2 զանգվածային հարաբերակցությամբ վերցված ածխի եւ պղնձի մասնիկներ պարունակող հատիկավորված լցվածքը:

Նվազում է երկաթի եւ մանգանի մնացորդային պարունակությունը ջրում եւ երկարում լցվածքի շահագործման ժամկետը:

(51) 7 C02F 1/68 (11) 1616 (13) A2
A23L 2/38

(21) P20040090 (22) 27.07.2004
(42) 11.11.2004

(71) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Հայաստան Հակոբյան (AM), Մարիետա Ավետիսյան (AM)

(72) Գարիկ Կարապետյան (AM), Գրիգորի Այվազյան (AM), Հայաստան Հակոբյան (AM), Մարիետա Ավետիսյան (AM)

(73) Գարիկ Կարապետյան, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM), Գրիգորի Այվազյան, Երեւան, Դավիթ Անհաղթի 18, բն. 32 (AM), Հայաստան Հակոբյան, Երեւան, Դավիթ Անհաղթի 18, բն. 32 (AM), Մարիետա Ավետիսյան, Երեւան, Ձորավար Անդրանիկի թաղամաս, Բ-2 զանգվ. 132, բն. 9 (AM)

(54) Յոդացված խմելու ջրի պատրաստման եղանակ

(57) Խմելու ջրի մեջ լուծվում են 0,0131-0,1965 մգ/լ քանակությամբ կալիումի յոդիդ եւ 0,02-1,45 մգ/լ կայունարար՝ նատրիումի թիոսուլֆատ:

Գյուտը կարող է կիրառվել զազավորված եւ չզազավորված քաղցրահամ եւ հանքային խմելու ջրերի արտադրությունում:

Ապահովվում է ջրում յոդի կայուն պարունակությունը բարձր ջերմաստիճանում եւ երկարատեւ ժամանակամիջոցում:

(51) 7 C08H 3/00 (11) 1617 (13) A2

(21) P20040108 (22) 01.09.2004

(42) 11.01.2005

(71) Սուսաննա Ավագյան (AM)

(72) Սուսաննա Ավագյան (AM)

(73) Սուսաննա Ավագյան, Երեւան, Մարշալ Բաղրամյան պող. 2-րդ փակ.10, բն.20 (AM)

(54) Ֆակտիսի ստացման եղանակ ցրտադիմացկուն քլորապրենային կաուչուկներ ստանալու համար

(57) 68,3-75,4% լինոլաթթու պարունակող խաղողի կորիզներից ստացված յուղը տաքացնում են ծծմբի եւ բարեփոխիչների հետ, կատալիզորդի եւ ակտիվարարի առկայությամբ, ընդ որում որպես բարեփոխիչներ միաժամանակ օգտագործում են օլիգոթերակրիլատը, երկմեթիլվինիլէթինիլկարբինոլը կամ դրա օշարակը եւ երկալիլէթերեռամ եթիլոլպրոպանը:

Ստացվում է բարձր որակի եւ կայուն նոր տեսակի ֆակտիս, որը կարող է կիրառվել որպես ցրտադիմացկուն պլաստիկարար (ցրտադիմացկունությունը -70 - (-80)°C) եւ փափկացնող՝ ցրտադիմացկուն քլորապրենային կաուչուկներ ստանալու համար՝ ավիացիոն արդյունաբերության մեջ որպես հերմետիկներ եւ այլ բնագավառներում:

(51) 7 C08H 3/00 (11) 1618 (13) A2

(21) P20040107 (22) 27.08.2004

(42) 13.12.2004

(71) Սուսաննա Ավագյան (AM)

(72) Սուսաննա Ավագյան (AM)

(73) Սուսաննա Ավագյան, Երեւան, Մարշալ Բաղրամյան պող. 2-րդ փակ.10, բն.20 (AM)

(54) Ֆակտիսի ստացման եղանակ

(57) Բուսական յուղը տաքացնում են ծծմբի եւ բարեփոխիչների հետ, կատալիզորդի եւ ակտիվարարի առկայությամբ, ընդ որում որպես բուսական յուղ օգտագործում են 68,3-75,4% լինոլաթթու պարունակող խաղողի կորիզներից ստացված յուղը, որպես կատալիզորդ՝ ալտաքսը, որպես բարեփոխիչներ՝ օլիգոթերակրիլատը եւ երկմեթիլվինիլէթինիլկարբինոլը կամ դրա օշարակը, կամ երկալիլէթերեռամեթիլոլպրոպանը:

Ստացվում է բարձր որակի եւ կայուն նոր տեսակի ֆակտիս, որը կարող է կիրառվել որպես ցրտադիմացկուն պլաստիկարար (ցրտադիմացկունությունը -70 - (-80)°C) եւ փափկացնող՝ ցրտադիմացկուն քլորապրենային կաուչուկներ ստանալու համար՝ ավիացիոն արդյունաբերության մեջ որպես հերմետիկներ եւ ռետինային, կաբելային, ավտոդոլային արտադրություններում:

(51) 7 C12G 3/06 (11) 1619 (13) A2

(21) P20040121 (22) 18.10.2004

(42) 13.12.2004

(71) Աբրիկ Պետրոսյան (AM)

(72) Աբրիկ Պետրոսյան (AM)

(73) Աբրիկ Պետրոսյան, Երեւան, Ա. Խաչատրյան 24, բն. 78 (AM)

(54) Բալասան «Արարիչ»

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ լիկյորների եւ օղիների արտադրությանը: Բալասանը պարունակում է բաղադրամասեր հետեւյալ հարաբերակցությամբ (կգ/ 10դալ)՝ ուրց 0,2-0,5, հազարատերեւուկ 0,1-0,5, եղինջ 0,2-0,6, խնկածաղիկ 0,2-0,5, պատրինջ 0,2-0,6, սրոհունդ 0,2-0,6, օշինդր 0,05-0,1, տարվական 0,1-0,4, անանուխ 0,1-0,2, լորենու ծաղիկներ 0,2-0,6, երիցուկի ծաղիկներ 0,1-0,4, բալենու տերեւներ 0,6-2,0, մասրենու պտուղներ 0,3-1,0, չիչխանի պտուղներ 0,3-0,6, գնարբուկ 0,2-0,5, զիվան 0,2-

0,4, իշառվույտ 0,1-0,4, փրփրուկ 0,2-0,3, եղբոր-արյուն 0,2-0,3, անիսոն 0,05-0,1, խնձորուկ 0,3-0,5, մատուտակի արմատ 0,05-0,2, խատուտիկի արմատ 0,1-0,3, ճարճատուկի արմատ 0,1-0,3, կծոխուրի պտուղներ 0,2-0,5, մարիամախոտ 0,05-0,2, ձիաձետ 0,1-0,2, եղեսպակ 0,2-0,4, լոշտակ 0,05-0,1, տատրակ 0,2-0,3, ծիծեռնախոտ 0,05-0,1, ալոճենու ծաղիկներ 0,2-0,3, ծիրանի պտուղներ 0,3- 0,5, ամմիվիտ 4,0-5,0, մեղր 2,5-3,0, նուռ 2,5-3,0, ջրասպիրտային հեղուկ՝ մնացածը, մինչև 45%-ոց խտության հասնելը:

Բարձրանում են բալասանի համային հատկությունները:

(51) 7 C12G 3/06 (11) 1620 (13) A2
(21) P20040143 (22) 28.12.2004
(42) 11.01.2005
(71) Աբրիկ Պետրոսյան (AM)
(72) Աբրիկ Պետրոսյան (AM)
(73) Աբրիկ Պետրոսյան, Երեւան, Ա. Խաչատրյան 24, բն. 78 (AM)
(54) Գինու բալասան «Ամրիտա»
(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ բալասանների արտադրությանը: Բալասանը ներառում է բաղադրամասեր հետեւյալ հարաբերակցությամբ (կգ/100դալ)՝ կարմիր գինի 860-880, խնկածաղիկ 1,1-1,3, փրփրուկ 1,1-1,3, առյուծագի 1,2-1,4, օշինդր 2,2-2,4, խնկողկուզակ 2,2-2,3, գնարբուկ 1,1-1,3, զիվան 1,2-1,3, լոշտակ 0,15-0,25, մասուր 0,9-1,1, ծիրանի հյութ 0,9-1,1, սեւ թուփ 0,9-1,2, հելիոտոն 5,0-5,2, մեղր 4,1-4,4, ջրասպիրտային հեղուկ՝ մնացածը: Բալասանի թնդությունը 11-14%, շաքարի պարունակությունը 1-5%:

Ընդլայնվում է բալասանների տեսականին եւ բարձրացվում են բալասանի զգայարանական հատկությունները:

(51) 7 C12G 3/06 (11) 1621 (13) A2
(21) P20040144 (22) 28.12.2004
(42) 11.01.2005
(71) Աբրիկ Պետրոսյան (AM)

(72) Աբրիկ Պետրոսյան (AM)

(73) Աբրիկ Պետրոսյան, Երեւան, Ա. Խաչատրյան 24, բն. 78 (AM)

(54) Լիկյոր-բալասան «Ձորաքար»

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ լիկյորների եւ օղիների արտադրությանը: Բալասանը պարունակում է բաղադրամասեր հետեւյալ հարաբերակցությամբ (կգ/ 20դալ)՝ ուրց 0,2-0,4, դաղձ 0,1-0,3, պատրինջ 0,3-0,5, խնկածաղիկ 0,2-0,5, սրոհունդ 0,2-0,6, արեղախոտի տերեւներ 0,1-0,3, փրփրուկի տերեւներ եւ ծաղիկներ 0,2-0,3, ախլախնձորի ծաղիկներ 0,2-0,5, անթառամի ծաղիկներ 0,2-0,3, առյուծագի տերեւներ 0,3-0,4, գնարբուկի տերեւներ եւ ծաղիկներ 0,3-0,5, վարդի թերթիկներ 0,3-0,5, մասրենու պտուղներ 0,3-0,5, չիչխանի պտուղներ 0,3-0,5, բալենու պտուղներ 0,3-0,5, ծիրանի պտուղներ 0,5-1,0, հոնի պտուղներ 0,2-0,5, կծոխուրի պտուղներ 0,5-0,7, ֆրուկտոզ 7,5-10,0, գլյուկոզ 7,5-10,0, ջրասպիրտային հեղուկ՝ մնացածը մինչև 20%-ոց թնդության հասնելը:

Բարձրանում են բալասանի զգայարանական հատկությունները:

(51) 7 D01H 7/10 (11) 1622 (13) A2
(21) P20040118 (22) 12.10.2004
(42) 13.12.2004

(71) Աշոտ Պապոյան (AM), Աբիգ Պալոյան (AM)
(72) Աշոտ Պապոյան (AM), Աբիգ Պալոյան (AM)
(73) Աշոտ Պապոյան, Գյումրի, 26 Կոմիսարների 60 (AM), Աբիգ Պալոյան, Գյումրի, Ա.Խաչատրյան 30, բն.2 (AM)

(54) Մանող կամերայի իլիկի հենարանային հանգույց

(57) Գյուտը վերաբերում է տեքստիլ մեքենաշինությանը:

Հանգույցն ունի անշարժ սնամեջ իրան, դրա մեջ առանցքակալների վրա տեղակայված միջանկյալ ռոտոր, որի մեջ առանցքակալների վրա տեղակայված է իլ հանդիսացող

շարժաբերային ռոտոր, դրա հետ կենտրոնավորված եւ առանցքի նկատմամբ անկյունային դարձի հնարավորությամբ սեւեռված հիմնական իլ, որը առածգական կցորդիչով եւ կենտրոնավորող տարրով համառանցք միացված է շարժաբերային ռոտորին եւ տեղակայված է առածգական սկավառակներից կազմված հենարանում: Հանգույցը լրացուցիչ ունի իրանի մեջ առածգական կախոցների վրա տեղակայված, առածգական սկավառակներից կազմված հենարանի համար դինամիկական բեռնաթափիչ հանդիսացող, լողացող հենոց:

Բարձրանում է հանգույցի հուսալիությունը եւ հնարավորություն է ստեղծվում մեծացնելու իլիկի պտտման արագությունը, 3 նկ.:

(51) 7 D06M 11/00 (11) 1623 (13) A2
D06M 13/02
(21) P20040126 (22) 02.11.2004
(42) 13.12.2004
(71) Գագիկ Կարապետյան (AM)
(72) Գագիկ Կարապետյան (AM)
(73) Գագիկ Կարապետյան, Երեւան, Բաշինջաղյան 121 (AM)
(54) Գորգի թելերի մշակման եղանակ
(57) Գյուտը վերաբերում է գորգագործությանը, մասնավորապես՝ թելերի մշակմանը եւ նախապատրաստմանը գորգագործական հաստոցների վրա գորգե պատրաստվածքների արտադրության համար:

Եղանակը կայանում է նրանում, որ թելերը ամրացնում են եւ ներկում: Ամրացումն իրականացնում են թելերը ընկղմելով մոլիբդենի նանոչափային մասնիկների կախույթի մեջ հեպտանում:

Բարելավվում են թելերի շփումաչափական բնութագրերը, ինչպես նաեւ նվազում են թելերի խզումները արտադրական պրոցեսում, 1 նկ.:

(51) 7 F02B 75/40 (11) 1624 (13) A2
F16C 3/06
(21) P20040059 (22) 21.05.2004
(42) 11.08.2004

(31) P20040002 (32) 13.01.2004 (33) AM
(71) Ռազմիկ Մովսեսյան (AM)
(72) Ռազմիկ Մովսեսյան (AM), Աշոտ Մովսեսյան (AM), Հովհաննես Մովսեսյան (AM), Անահիտ Մովսիսյան (AM)
(73) Ռազմիկ Մովսեսյան, Երեւան, Զորավար Անդրանիկի 56, բն.7 (AM)
(54) Շարժիչ
(57) Գյուտը վերաբերում է շարժիչաշինությանը, մասնավորապես՝ ներքին այրման շարժիչներին:

Շարժիչն ունի տրանսպորտային միջոցի առաջնային լիսեռի հետ համագործակցող ծնկածեւ լիսեռ, որն իրենից ներկայացնում է իրար զուգահեռ տեղակայված երկու կարճ լիսեռների միացություն: Միացությունն իրականացված է ատամնանիվների միջոցով, ընդ որում առաջնային լիսեռի հետ համագործակցում է միայն մեկ լիսեռը, իսկ շարժիչի մխոցների աշխատանքային քայլերն ունեն միեւնուն ուղղությունը:

Փոքրացվում են շարժիչի եզրաչափերը եւ բարձրացվում է ՕԳԳ-ն, 2 նկ.:

(51) 7 F16C 9/04 (11) 1625 (13) A2
(21) P20040002 (22) 13.01.2004
(42) 12.07.2004
(71) Ռազմիկ Մովսեսյան (AM)
(72) Ռազմիկ Մովսեսյան (AM), Աշոտ Մովսեսյան (AM), Հովհաննես Մովսեսյան (AM), Անահիտ Մովսիսյան (AM)
(73) Ռազմիկ Մովսեսյան, Երեւան, Զորավար Անդրանիկի 56, բն.7 (AM)
(54) Ծնկածեւ լիսեռի եւ շարժաթելի ամրակցման հանգույց
(57) Գյուտը վերաբերում է շարժիչաշինությանը: Հանգույցն ունի ծնկածեւ լիսեռ, շարժաթել՝ իր կափարիչով եւ նրանց միակցող հեղյուսմանեկային միացում: Լիսեռի եւ շարժաթելի միջեւ տեղադրված են գլանիկներ, իսկ հեղյուսմանեկային միացման մեջ հեղյուսն իր բարակ ծայրամասում ունի հիմնական ակոսների հակառակ ուղղությամբ դեպի հեղյուսի գլխամաս

բարձրացող ակոսներ, որոնց վրա նույն ուղղությամբ ձգվում է երկրորդ մասնակը:

Բարձրացվում է ծնկածեւ լիսեռի երկարակեցությունը, 3 նկ:

- (51) 7 F16D 51/06 (11) 1626 (13) A2
(21) P20040136 (22) 01.12.2004
(42) 11.01.2005
(71) Նորիկ Բազիկյան (AM), Արթուր Ջինյան (AM), Կարո Մոսիկյան (AM)
(72) Նորիկ Բազիկյան (AM), Արթուր Ջինյան (AM), Կարո Մոսիկյան (AM)
(73) Նորիկ Բազիկյան, Երեւան, Մանթաշյան 4/5, բն. 7 (AM), Արթուր Ջինյան, Երեւան, Մայիսի 9-ի 49, բն. 38 (AM), Կարո Մոսիկյան, Երեւան, Րաֆֆու 93, բն. 60 (AM)
(54) Ավտոմոբիլի արգելակման համակարգ
(57) Գյուտը վերաբերում է ավտոմոբիլաշինությանը, մասնավորապես՝ հիդրավլիկական շարժա-հաղորդով արգելակման համակարգերին:

Համակարգն ունի արգելակման թմբուկ, արգելակման կոճղակներ, որոնք փոխազդում են հիդրավլիկական շարժա-հաղորդ սարքի արգելակման գլանի մխոցների հետ: Յուրաքանչյուր կոճղակի կրունկին ամրակցված է աղեղածեւ տարր, իսկ մխոցի ճակատին արված է աղեղածեւ փորվածք, որի տրամագիծը հավասար է կոճղակի աղեղածեւ տարրի տրամագծին:

Ապահովվում է կոճղակի եւ մխոցի սեղմման ուժի հավասարաչափ բաշխումը, 3 նկ.:

- (51) 7 G06G 7/26 (11) 1627 (13) A2
(21) P20040125 (22) 02.11.2004
(42) 13.12.2004
(71) Վարդան Ալեքսանյան (AM), Դավիթ Շաղգամյան (AM)
(72) Վարդան Ալեքսանյան (AM), Դավիթ Շաղգամյան (AM)
(73) Վարդան Ալեքսանյան, Երեւան, Դրոյի 14/1,

բն.16 (AM), Դավիթ Շաղգամյան, Երեւան, Քաջագունու 10, բն.4 (AM)

(54) Ոչ գծային թվանշանաանալոգային կերպափոխիչ

(57) Գյուտը վերաբերում է հաշվողական եւ չափիչ տեխնիկայի բնագավառներին եւ կարող է օգտագործվել թվանշանային կոդը հաստատուն հոսանքի լարման ոչ գծային օրենքով կերպափոխելու համար, ընդ որում թվանշանային կոդը հանդիսանում է այդ ոչ գծային ֆունկցիայի արգումենտը:

Սարքն ունի մուտքային կոդի հիշման բլոկ, կոդային կառավարմամբ հենանիշային լարման երկու բլոկ եւ գծային թվանշանաանալոգային կերպափոխիչ, որի հենանիշային լարման մուտքը միացված է հենանիշային լարման առաջին բլոկի ելքին, տեղեկատվական մուտքը՝ մուտքային կոդի հիշման բլոկի առաջին ելքին, որի երկրորդ ելքը միացված է հենանիշային լարման բլոկների կառավարման մուտքերին: Կերպափոխիչը լրացուցիչ ունի գումարող գործության ուժեղարար: Գծային թվանշանաանալոգային կերպափոխիչն ունի հոսանքային ելք, որը միացված է գումարող գործության ուժեղարարի մուտքին, որը ռեգիստորի միջոցով միացված է հենանիշային լարման երկրորդ բլոկի ելքին:

Ոչ գծային թվանշանաանալոգային կերպափոխման հիմքում ընկած է կերպափոխման ֆունկցիայի մոտարկումը բեկյալով: Մոտարկումն իրականացվում է հաստատուն X_p քայլով, որը երկուական կոդի դեպքում ընդունվում է $X_p=2^m$:

Պարզեցվում է կերպափոխիչի կառուցվածքը, 2 նկ.:

- (51) 7 G21K 1/06 (11) 1628 (13) A2
(21) P20040120 (22) 18.10.2004
(42) 13.12.2004
(71) Արմեն Ռոստոմյան (AM)
(72) Արմեն Ռոստոմյան (AM)
(73) Արմեն Ռոստոմյան, Երեւան, Շիրվանզադեի 24/30, բն.39 (AM)

(54) Ռենտգենյան միաձույլ ռեզոնատոր

(57) Ռենտգենյան միաձույլ ռեզոնատորն ունի բազմանիստ բացվածք եւ փնջի ելքի եւ մուտքի պատուհաններ: Ռեզոնատորը պատրաստված է սիլիցիումի միաբյուրեղից, ունի լրացուցիչ անդրադարձնող նիստ եւ համակարգի սարմանը հետեւող գրանցող սարք, ընդ որում փնջի մուտքի եւ ելքի պատուհանները աստիճանաձեւ կիսաթափանց թիթեղներ են:

Բարելավվում են ռենտգենյան փնջի օպտիկական եւ ֆիզիկական ցուցիչները, իրականացվում է մեկ ֆոկալ հետագծով փնջի շարունակական շրջապատւյտ, ստեղծվում է հետադարձ կապ համակարգի սարմանը հետեւելու համար, 1 նկ.:

(51) 7 H02H 3/48 (11) 1629 (13) A2

(21) P20040132 (22) 26.11.2004

(42) 13.12.2004

(71) Սպարտակ Յակոբյան (AM), Գուրգեն Յակոբյան (AM)

(72) Սպարտակ Յակոբյան (AM), Գուրգեն Յակոբյան (AM)

(73) Սպարտակ Յակոբյան, Երեւան, Կյուլաբենկյան 34 ա, բն.37 (AM), Գուրգեն Յակոբյան, Երեւան, Կոմիտասի 22, բն.63 (AM)

(54) Էներգահամակարգի ասինքրոն ռեժիմի հայտնաբերման եւ վերացման եղանակ

(57) Էլեկտրահաղորդման հանգույցում չափում են լարումներն ու հոսանքները, հաշվում են դինադրության կոմպլեքսային մեծությունները եւ ըստ ժամանակի դրանց փոփոխության արագության մեծությունները, չափում են լարման հաճախությունը, հաշվում դրա փոփոխության արագության արժեքները իր նշանով, ֆիքսում են հաճախության փոփոխության արագության նշանի փոփոխությունը եւ փոփոխության ուղղությունը, համեմատում են հաշված մեծությունները ավտոմատիկայի սարքվածքին տրված դրվածքների հետ, իսկ հաճախության փոփոխության արագության նշանը՝ հսկվող տեղամասի հակառակ ծայրի նմանատիպ նշանի հետ, համեմատության

արդյունքներով ֆիքսում են հսկվող տեղամասում ճոճքի էլեկտրական կենտրոնի տեղաբաշխումով ասինքրոն ռեժիմը նրա առաջացման պահին՝ եթե հաճախության փոփոխության արագության արժեքը գերազանցել է կոպիտ դրվածքը, կամ եթե ֆիքսված են հսկվող տեղամասի ծայրերում այդ պարամետրի տարբեր նշաններ եւ պարամետրի արժեքը գերազանցել է զգայուն դրվածքը, կամ այն պահին, երբ փոխադրման անկյունն անցնում է 180° արժեքը՝ եթե ֆիքսված է պարամետրի նշանի փոփոխություն եւ պարամետրի արժեքը գերազանցել է զգայուն դրվածքը: Ավտոմատիկայի սարքվածքի աշխատանքի բազմաստիճան ռեժիմում որոշում են ասինքրոն ռեժիմի բնութագրերը: Աճում է էներգահամակարգի ասինքրոն ռեժիմի հայտնաբերման հավաստիությունը, 7 նկ.:

(51) 7 H02K 17/00 (11) 1630 (13) A2

H02K 19/00

F03D 9/00

F03B 13/00

(21) P20040122 (22) 22.10.2004

(42) 11.01.2005

(71) Ջարեհ Վարդանյան (AM), Ալեքսան Չալիկյան (US)

(72) Ջարեհ Վարդանյան (AM), Ալեքսան Չալիկյան (US)

(73) Ջարեհ Վարդանյան, Երեւան, Ջարյան 126 (AM), Ալեքսան Չալիկյան, 15933 Բասսետտ ստրիթ Վան Նյուս, Կալիֆորնիա 91406 (US)

(54) Խողովակաշարում ջրի հոսքի էներգիան էլեկտրականի կերպափոխելու սարք

(57) Սարքն ունի ջրի խողովակաշարում լիսեռի վրա տեղադրված ջրանիվ, որի լիսեռը ամրակցված է գեներատորի հետ: Սարքը կազմված է երկու մասից բաղկացած մետաղե անուրից, որն ամրակցված է խողովակաշարի վրա արված ջրանիվի չափերին համապատասխան պատուհանի վրա, անուրի վերին մասին միակցված թիթեղին, որի վրա տեղադրված է գեներատորը: Ջրանիվը ծածկված

է կափարիչով, կափարիչի եւ ջրանիվի լիսեռի միջեւ տեղադրված է ռետինե օղակ, իսկ անուրի եւ խողովակաշարի միջեւ՝ ռետինե միջադիրներ, 1 նկ:

-
- (51) 7 H02M 7/44 (11) 1631 (13) A2
 (21) P20040085 (22) 09.07.2004
 (42) 13.09.2004
 (71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն (AM)
 (72) Գեւորգ Կարդաշյան (AM), Արթուր Արզումանյան (AM)
 (73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առեւտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 105 (AM)

(54) Բազմամուտքային եռափուլ կերպափոխիչ
 (57) Բազմամուտքային եռափուլ կերպափոխիչն ունի ելքում աստղաձեւ միացված համաչափ լարումների համակարգ, երկու «Եվ-ՈՉ» տրամաբանական տարրերի վրա հավաքված մուլտիփիբրատոր, տասական հաշվիչ, երկուական հաշվիչ, վերծանիչ, սեկցիաներում միավորված «Եվ-ՈՉ» տրամաբանական տարրեր, հզոր ելքային էլեկտրոնային բանալիներ: Եռափուլ աստղաձեւ միացված համաչափ լարումների համակարգի փուլային լարման սեղմակներն են յուրաքանչյուր սեկցիայի իրար միացված ելքային էլեկտրոնային բանալիների միացման ընդհանուր կետերը, իսկ զրոյական լարման սեղմակ է հանդիսանում հաստատուն լարման աղբյուրի միջին կետը:

Բարձրացվում է սարքի օգտակար գործողության գործակիցը, ելքային լարման որակը եւ հուսալիությունը, 2 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական
տվյալների նույնականացման միջազգային
կոդերը ըստ ՄՍՅԿ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
13 փաստաթղթի տեսակի կոդը
Ս օգտակար մոդելի արտոնագիր
21 հայտի համարը
22 հայտի ներկայացման թվականը
23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
31 առաջնային հայտի համարը
32 առաջնային հայտի ներկայացման թվականը
33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
45 օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54 օգտակար մոդելի անվանումը
56 տեղեկատվության աղբյուրներ
57 ռեֆերատը
62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ
հայտը
71 հայտատուն, երկրի կոդը
72 օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74 արտոնագրային հավատարմատար
85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 7 A42B 1/04 (11) 90 (13) U
A42B 1/00
A41D 23/00
(21) U20050023 (22) 16.03.2005
(71) Վահագն Շահբազյան (AM), Լուսինե Եպիսկոպոսյան (AM)
(72) Վահագն Շահբազյան (AM), Լուսինե Եպիսկոպոսյան (AM)
(73) Վահագն Շահբազյան, Գյումրի, Տիգրան Մեծի 4, բն.8 (AM), Լուսինե Եպիսկոպոսյան, Գյումրի, Պարույր Սեւակի 6, բն.32 (AM)
(54) Գլխանոց
(57) Օգտակար մոդելը վերաբերում է թեթև արդյունաբերության բնագավառին, մասնավորապես՝ գլխանոցի մոդելավորմանը:

Գլխանոցը պատրաստված է ամբողջական կտորից հավասարասրուն եռանկյան տեսքով: Գլխանոցը միակցվում է հագուստի օձիքին երեք ամրակցման տարրերի միջոցով, որոնք տեղակայված են եռանկյան գագաթներին՝ հագուստի օձիքի ծոծրակային մասի երկրաչափական կենտրոնի միեւնույն մեկ կետին միակցվելու հնարավորությամբ:

Եռանկյան կողմերի միջև գտնվող գագաթը միակցում են օձիքի ծոծրակային մասի վրա տեղակայված ամրակցման տարրին, այնուհետև ձեւվածքը գցում գլխին այնպես, որ եռանկյան հիմքը գտնվի կրողի ճակատային մասում: Մյուս երկու գագաթներն անց են կացնում կզակի տակով՝ հակադիր ուղղություններով եւ ամրակցում օձիքի այն կետում, որին ամրակցված է առաջին գագաթը:

Պարզեցվում է գլխանոցի կառուցվածքը, ապահովվում է օգտագործման համապիտանիությունը, 2 նկ.:

(51) 7 B62D 57/02 (11) 91 (13) U
(21) U20040138 (22) 13.12.2004
(71) Վարուժան Հարությունյան (AM)
(72) Վարուժան Հարությունյան (AM)
(73) Վարուժան Հարությունյան, Վանաձոր, Նարեկացու 4, բն.15 (AM)
(54) Պտտվող-քայլող շարժասարք
(57) Օգտակար մոդելը նախատեսված է ճանապարհային և համեմատաբար հարթ արտաճանապարհային տեղանքներով ընթացող տրանսպորտային միջոցների համար: Շարժասարքը կարող է օգտագործվել ինչպես փափուկ, այնպես էլ կոշտ հողածածկույթով տեղանքներում: Պտտվող-քայլող շարժասարքն ունի շարժաբեր, ուղղորդիչներով բռնեցք, թաթերին գնդային կամ հողակապային միացությամբ ամրակցված ոտքեր, որոնց հողակապորեն ամրակցված են հոլովակներ: Շարժասարքը լրացուցիչ ունի բռնեցքին հողակապորեն ամրակցված պտտող անիվ, որին հողակապորեն ամրակցված են հոլովակներ: Պտտող անիվը լծակային միացությամբ ամրակցված է ոտքերին, իսկ առածգական կցորդիչի միջոցով՝ շարժաբերին:

Շարժաբերը պտտական շարժում է հաղորդում պտտող անիվին առածգական կցորդիչի միջոցով: Ոտքերը համան մեջ են մտնում բռնեցքի հետ գլորվող հոլովակի միջոցով: Հարթ տեղանքով շարժման ժամանակ, երբ ոտքերից մեկը հավում է ճանապարհի մակերեսային, բռնեցքի ուղղորդիչների շնորհիվ տրանսպորտային միջոցի և ճանապարհի միջև եղած հեռավորությունը մնում է հաստատուն՝ բացառելով իր ուղղաձիգ տատանումները, իսկ առածգական կցորդիչը նվազեցնում է տրանսպորտային միջոցի հորիզոնական տատանումները:

Բարելավվում է շարժասարքի կառուցվածքը, նվազեցվում են սարքի հորիզոնական տատանումները շարժաբերի հաստատուն անկյունային արագությամբ պտույտի դեպքում, 3 նկ.:

- (51) 7 G07F 11/00 (11) 92 (13) U
B21D 1/05
- (21) U20050047 (22) 19.04.2005
- (71) Տիգրան Գալստյան (AM), Տիգրան Սեկոյան (AM)
- (72) Տիգրան Գալստյան (AM), Տիգրան Սեկոյան (AM)
- (73) Տիգրան Գալստյան, Երեւան, Ավանեսովի փող. անց. 8/2, բն.30 (AM), Տիգրան Սեկոյան, Երեւան, Քաջազնունու 9, բն.Ա (AM)
- (54) Մետաղադրամային ավտոմատ եւ գրտնակային մեխանիզմ այդ ավտոմատի համար
- (57) Օգտակար մոդելը վերաբերում է վաճառքի մետաղադրամային ավտոմատներին եւ կարող է օգտագործվել հուշահիքերի պատրաստման եւ վաճառքի համար: Մետաղադրամային մեխանիզմ, գործադիր մեխանիզմ եւ կառավարման էլեկտրական բլոկ ունեցող ավտոմատում, առաջարկության համաձայն գործադիր մեխանիզմը

կազմված է մետաղադրամի ձեւի մետաղյա նախապատրաստվածքի ընդունման ճեղքավոր անցքից, նախապատրաստվածքի տեղաշարժման անցուղուց եւ գրտնակային զույգից, որի տանող գրտնակը հողավորված է շարժաբեր սարքի հետ:

Տանող գրտնակն ունի ելման դիրքի ճշտման միջոց, գրտնակներից մեկի գլանային մակերեսային կան օղակաձեւ ելուստներ, իսկ մյուս գրտնակի գլանային մակերեսային կան այդ ելուստներին համապատասխան օղակաձեւ փորվածքներ:

Ավտոմատի աշխատանքի արդյունքում նախապատրաստվածքը գրտնակվում է, եւ նրա վրա պատկերվում է հուշապատկեր:

Ապահովվում է լրացուցիչ մշակում չպահանջող հուշահիքի պատրաստում, 2 անկախ կետ, 6 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՅԿ ST.80 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
 - 13 փաստաթղթի տեսակի կոդը
S արդյունաբերական նմուշի արտոնագիր
 - 21 հայտի համարը
 - 22 հայտի ստացման թվականը
 - 23 ցուցահանդեսային առաջնության թվականը
 - 24 թվականը, որից սկսվում է ՀՀ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
 - 31 առաջնային հայտի համարը
 - 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
 - 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
 - 51 արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը(ները)
 - 54 արդյունաբերական նմուշի անվանումը
 - 55 արդյունաբերական նմուշի պատկերը (զծանկարը, լուսանկարը)
 - 57 էական հատկանիշների ամբողջությունը
 - 71 հայտատուն(ները), երկրի կոդը
 - 72 հեղինակը(ները), երկրի կոդը
 - 73 արտոնագրատերը(երը), հասցեն, երկրի կոդը
 - 74 արտոնագրային հավատարմատար
-

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) 09-01 (11) 122 (13) S
 (21) 20040009 (22) 14.06.2004
 (71) Ռասթրին Լիմիթիդ (CY)
 (72) Ալեքսանդր Մամոնտենկո (UK)
 (73) Ռասթրին Լիմիթիդ (CY)
 (74) Ռ. Մանասերյան
 (54) Շիշ
 (55)



Նկ.4

(57) Շիշ, որը բնութագրվում է՝

- հետեւյալ հորինվածքային տարրերով՝ ձվաձեւ լայնական հատվածքով իրանով, որը կտրուկ անցումով միացված է փոքր թեքություն ունեցող ուսիկներին.

- հատակի մասում մի ընդհանուր ձվաձիր կազմող, այնուհետեւ դեպի վեր ձգվող երկու առանձնացված ձվաձեւ մակերեսությունով, որոնցից մեկի լայնական հատվածքն ըստ բարձրության մնում է անփոփոխ, իսկ մյուսինը համաչափորեն փոքրանում է դեպի վզիկը, ընդ որում դրանց միացման սահմանագիծը կազմում է ուղղաձիգ, ներքեւից վերեւ հաստացող ալիքաձեւ պատկեր.

- իրանի կողմնային մակերեսության վրա առկա՝ շշի պարունակությանն ու արտադրողին վերաբերող տարբեր գրառումներով, առջեւի ծախակողմյան մակերեսության վրա՝ ներքեւից վերեւ հաստացող ալիքաձեւ պատկերի հետ զուգակցված “МЯГКОБ” ռուսատառ ազգանվան եւ հատակի պարագծով՝ “МЯГКОБ ПРЕМИУМ” բառերի տեսքով.


- թեթեւակի գոգավորություն ունեցող հատակով, որի՝ իրանի առջեւի ու հետեւի կողմերի հետ միացման եզրերին առկա են խիտ դասավորված, շառավղային ուղղություն ունեցող կարճ գծիկների տեսքով ցցուն զարդանախշեր, իսկ հատակի կենտրոնում, երկար կողմերին զուգահեռ՝ “МЯГКОБ” գրառումը.

- ներքեւի՝ ավելի կարճ ու հաստ եւ վերեւի՝ ավելի երկար ու բարակ մասերից բաղկացած



Նկ.1

Նկ.2



Նկ.3

գլանաձև բկանցքով.

- երկու՝ իրար հետ բարակ մետաղական կապերով միացված գլանաձև ու սկավառակաձև մասերից բաղկացած կափարիչով:

- (51) 09-01 (11) 123 (13) S
 (21) 20040008 (22) 11.06.2004
 (71) Ռասթրին Լիմիթիդ (CY)
 (72) Ալեքսանդր Մամոնտենկո (UK)
 (73) Ռասթրին Լիմիթիդ (CY)
 (74) Ռ. Մանասերյան
 (54) Շիշ
 (55)



Նկ.1

Նկ. 2

Նկ. 3



Նկ.4

(57) Շիշ, որը բնութագրվում է՝

- հետեւյալ հորինվածքային տարրերով՝ ձվաձև լայնական հատվածքով իրանով, որը կտրուկ անցումով միացված է փոքր թեքություն

ունեցող ուսիկներին.

- իրանի առջևի եւ հետևի կողմերի կենտրոնական մասում՝ ուղղաձիգ, ներքեւից վերեւ հաստացող ալիքաձև պատկերի հետ համակցված “МЯГКОБ” ռուսատառ ազգանվան պատկերմամբ եւ շշի պարունակությանն ու արտադրողին վերաբերող տվյալներով գրառումներ ներառող պիտակներով.

- պարուրակավոր պսակիկով ավարտվող գլանաձև վզիկով.

- թեթևակի գոգավորություն ունեցող հատակով, որի՝ իրանի առջևի ու հետևի կողմերի հետ միացման եզրերին առկա են խիտ դասավորված, շառավղային ուղղություն ունեցող կարճ գծիկների տեսքով ցցուն զարդանախշեր, իսկ հատակի կենտրոնում, երկար կողմերին զուգահեռ՝ “МЯГКОБ” գրառումը.

- բարակ մետաղական կապերով իրար միացված երկու մասերից բաղկացած մետաղական պարուրակավոր կափարիչով, որի ներքեւի՝ գլանաձև մասի վրա գրառված է “МЯГКОБ” բառը:

- (51) 09-03 (11) 124 (13) S
 (21) 20050006 (22) 23.03.2005
 (71) “Գրանդ Քենդի” հայ-կանադական ՀՀ ՍՊԸ, Երեւան, Մասիսի 31 (AM)
 (72) Վահան Աբրահամյան (AM)
 (73) “Գրանդ Քենդի” հայ-կանադական ՀՀ ՍՊԸ, Երեւան, Մասիսի 31 (AM)
 (54) Սրտի տեսքով տուփ
 (55)



Նկ.1



Նկ.2

(57) Սրտի տեսքով տուփ, որը բնութագրվում է՝
- ստվարաթղթե տուփի՝ սրտաձև, կիսաշրջա-
նաձև, ուղղանկյունաձև, քառակուսի եւ սեղանա-
ձև հատվածներից բաղկացած փռվածք-նախա-
պատրաստվածքով.

- հավաքված տուփի՝ վերելի կողմից սրտաձև պատկերի եւ հետելի կողմից դրա վրա հավաքվող կանոնավոր զուգահեռանիստի տեսքով .

- սրտաձև պատկերի վրա՝ երկնքի ընդհանուր ֆոնին պատկերված տարբեր չափերի սրտիկներով, նետ ու աղեղը ձեռքին, մուլտիպլիկացիայի ոճով կատարված թեւավոր փղիկով եւ կանաչ թմբի վրա պատկերված՝ միմյանց գրկած երկու սրտերով.

- վերելի կողմի մեջտեղի մասում եւ հետելի ու ծախ կողմերին՝ միմյանց գրկած երկու սրտե-
